

դէպ անհունէ կորուրանք տածելով հան-
գերն, իստ լիզուաւ ձաղկած է անոր պա-
կասութիւնները: Կծու յօղաւաններով ուղած
է ցնցել անոնց օտարութիւնն ու հանդէպ
հասարակական գործոց ունեցած անասը-
քելութիւնը: Խնայած չ'է նաև կղերին, ու-
րոնց ամէն բան իրենց ձեռքին մէջ կեն-
դրանացնելու գրութեան դէմ ծրագ ու գոր-
ծած է:

Կրօնը կղերին, իսկ հասարակական գոր-
ծերը աշխարհականին. ահա իր գաւանու-
թիւնը, իր սկզբունքը և իր կէտ նպատակին:
Ձերմ պահպանողական, տոհմաւէր և Մխի-
թարեանց աշակերտ չ'էր ուղեր որ Գաթօլիքու-
թիւնը իրզէ տոհմային ծէսերը, արարողու-
թիւններն, ու լիզուէ:

«Գաթօլիքութիւնը եթէ զմեզ պիտի կուչ
տայ, պատճառը մեր մէջ փնտռելու է, գրած է
Սէտալի Հանպիւլէթի մէջ. Մեքլիւր, Մարօ-
նին, Խպալին և Ասորին կաթօլիք կ'ըլլայ,
բայց նորէն չի փոխուիր» և վրայ չի տար իր
ծէսը: «Կարճ միջոց մը կայ, կը զբեր ու-
րիչ ազգի և տարբեր հանգամանաց մէջ,
կրօնական ուղղութիւնը թող առ այժմ Գոլէն-
ցիներուն մէայ, բայց Գարոցները մեան Մխի-
թարեաններուն ձեռքը և հասարակական գոր-
ծերը՝ աշխարհականներուն: Կէս պար թող
չարունակէ այս գրութիւնն, այն ատեն կը
տեսնէք սա ափ մը հայ Գաթօլիքները, ու-
րոնք Տէրութեան հաւատարիմ հոյատակներն
են և կը գերազանցեն իրենց՝ մրցակից-
ները»:

Վարդան Բաշա առաջին անգամ ըստնա-
մեայ պատանի մըն էր ամուսնացած ժամա-
նակ: Իր երկու անգամ կնքած ամուսնու-
թիւններէն ընդ ամէնն 10 զաւակ ունեցած
է, իրենք միայն ողջ են:

Վարդան Բաշայի մահը տեղի ունեցած
է 1879 Մարտ 28, Աւագ Ռեքաթ օրը:

Ձանազան արտաքին և ներքին զբաղղու-
թիւններ, արկածներ և մահաւանդ մտաւորա-
կան չափազանց աշխատութիւն մ'ընկնեցին
անմահ խմբագիր Բաշան, որուն կեննքը եր-
կարելու համար ի զուր գերմարդկային ճիգեր
ըրին փէշտիմալներեան, փէշտիպեան և խո-
րասաններեան բո՛րիչները:

Թշկական ամէն զեղ և դարման անու-
գուտ եղաւ:

Յուդարկաւորութիւնն հիկղիցական մեծա-
շուք փառաւորութեամբ տեղի ունեցաւ, մաս-
նակցութեամբ Եպիսկոպոսներու, բազմաթիւ
Վարդապետներու, կառավարական բարձրաս-
տիճան Գառուն, հայ և օտար խմբագիրնե-
րու և ժողովրդեան խունք բազմութեան:

Վարդան Բաշա թաղուած է Շիշլիի Հայ
Հոռմկականաց Գերեզմանատունը. տարիներ
հոն մնաց գրեթէ ամենէն մոռցուած և առանց
չիրմի:

2-3 տարիէ ի վեր կրցաւ վերջապէս իր
սրբույն շնորհիւ ունենալ իրեն վայելուչ մա-
հաչիրիմ մը:

Ամէն անգամ որ այդ Գերեզմանատան
այց կ'ըլլմ, չ'եմ կրնար անտես ընել այդ
հանգստարանն և չ'եմ կրնար չի կրկնել
թէ՛րճմանը էֆքեարի հետ. «Մեքք որ ույսը
պիտի կատարեռարեանց Գաճճը՝ մա՛րը մեր
ձեռքին յափշտակեց տարաւ»:

Թէ որչափ Վարդան Բաշայի մահը ան-
փոխարինելի կորուստ մըն է մահաւանդ Հայ-
Հոռմկական Հասարակութեան համար, յայտա-
նի է հետեւեալը երկու ոտանաւորներէն գե-
րոնք՝ իր յուշարար յիշատակ՝ կ'ընդօրինա-
կեմ թէ՛րճմանը էֆքեարի 528 և 532
թիւերէն:

Յ. Ա.

ԵՂԵՐԳ Ի ՄԱՂ ՎՍԵՄԱՇՈՒՔ

ՎԱՐԳԱՆ ՊԵՅԻ

Լուր բօթաբեր հնչեց յանկարծ զԵլերով,
Մինչ փոթորիկն յուզէր զԵրկին և ըզծով. 11
Վարդան Պէյի գուժեալ դաժտն լուրն ըլժան
Թաղոն ընդհանուր աշխուժեալ տրե՛ր աս:

Մինչ զԵր գըրէւ, ըզբարեկամ միւսն հնծէր,
Թախծալեց ամպ պատեր սըզով՝ շատ աշեր,
Ես զերկուսն միանգամայն ուղբայից:
Ո՛չ մտաւայն ըզբարեկամ և զգրիչ:

Մերթ ի սրճօգ, մերթ առաւանդօք իւր աղբօք,
Լեալ էր Ալզեի արդարախոհ դասաստը,
Գիշ են նօքա՛սրք ի փակել շամբանին. 11
Գարուց ի դարս անմահ գործօք կը յե՛շտին:

Ո՛հ Արքայանայ յիշատակն մէ մեռանի,
Դափնեաց անմահ զըլուխն ալ է արժանի .
Գործք իւր իրեն մարթին կանգնել մահարձանն,
Թէ ապերախտ աշակերտք իւր զըլանանն:

Թէ անբռնեանն միանգամայն իւր ազգին,
Հաւատարիմ, ձանեց զգրիչ իւր անզին .
Երախտապարտ թշուառացեալն Հայաստանն,
Ողբալով միշտ, յիշեացէք եղ ս՛վ Արարանն:

31 Մարտ 1879. ՍԵՊՈՒՂ ՄԻՆԱՍԵՆ

Ե Ղ Ե Ր Գ Ի Մ Ա Հ

Յ Ո Վ Ս Է Փ Վ Ա Ր Գ Ի Ա Ն Պ Է Յ Ի

Թըչուառ պանդուխտ որ 'ի քընար յոգնա-
տըխուր լալագին

Ընդ հովանեաւ ծառայդ նըստեալ զո՞ երգես դու
'ի շիրմին .

Թէ գոյժ դու տաս չարաբաստեկ ազգիդ Հայոց
բովաբեր,

Աղէ՛ ասա թէ զի՞նչ նոր վերս յաւել վերացս
Երկնից Տէր:

Ձանազորոյն ճատակազիր լալ ես պարտիմ Հայ-
կազանց

Ըղգերեալ ազգ ողբալ է անկ . ընդ ստտեղօք
սեւազգեաց,

Մինչ խընդայ Յոյն, խընդայ Ղալալ, խընդայ
և ազգ խուժաղուժ:

Հիփացեղացս լալ է բաժին, մեզ բուռանի տա-
տասկ փուշ:

Ընդ թարմ հոգով որ սաս հանգչի ըզմեծ Աար-
դան ես ողբամ

Որ իւր մահուամբ եթոզ ըզմեզ ըզպանդուխտըս
անխընամ:

Սուգ առին Հայք սեւ ամպ պտտեաց մեր զԱշ-
խարհին հօրեղանն:

Լացին բընիկք, լացին օտարք ըզհայազգէ մեր
Տանդոնն:

Որ երեւմըն Վասպուրական մահահամբոյր է
զաշարին

Մեծահըռչակ Մամիկոնեան կացեալ պաշտպան
աշխարհին:

Արիաբար պատերազմեալ ընդ վառ Պարսիկ
մուկղինն,

Անկառ անշունչ գետնաթուալ է փըրկութիւն
իւր տահմինն:

Անուանակից անմահ Քաջին և Դիւցադին բախ-
տակից,

Վեհ քան ըլնեա ի զըրսական ի յասպարէզ ճըչ
նալից:

Մինչ յետին շունչ զո՛հեաց Աղբիւր գաշխա-
տութիւն անխընայ,

Անմահ կացոյց զիւր անու՛ն քան զանտիական
Պարբա:

Իմաստասերդ քան ըզՍողոն, զօրէնըսդիրն Ա
թենեանն,

Ձինչ փոյթ է քեզ թէ Հայկազունք ըզմահար-
ձանդ զըլանանն:

Թառամեցան աշխարհակուլ ինքնակալաց զափ-
նեայ պսակք .

Մարմարաշէն զարձան քաջաց քակտեալ տա-
րաւ ժամանակ:

Չ'են մահարձանք շքեղակերտ, երկնաբըլաց
ոչ նոճիք,

Որ խօսեցցեն ընդ երկրագունդս քոյշ անմա-
ռաց երախտիք:

Երախտազէտք կանգնեցցեն քեզ ի խորս ողբ-
տից մահարձանն

Անխախտելի յամենակուլ ժամանակէ յաւի-
տեանն:

Ընդ պանդուխտին և ես խառնեմ զիմ արտա-
սուռ թախծազին .

Բազմադիմի քոց խընամաց զի՞նչ տըրիտուր
թանկազին

Հատուցանել եղէց կարող քոյշ աշակերտ ս-
նարձանն .

Հանապաղարդ ընկալ մի շիթ գիմ արտօբը
մե՛ծդ Վարդանն:

7 Ապրիլ 1879. ԳՐԻԳՈՐ ՎԵՐԳՅԵՆ

